

A 12.00.05
U-35

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ

ՇԱՀԱԳԻՏԱԿԱՆ-ԲՈՆԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՄԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ճ.Բ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2003

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

МАРГАРЯН АННА РАЗМИКОВНА

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА КОРЫСТНО-
НАСИЛЬСТВЕННОЙ ПРЕСТУПНОСТИ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12. 00. 05 — уголовное право и криминология, уголовно — исполнительное право.

ЕРЕВАН - 2003

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հ. ԳԱԲՈՒԶՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Վ. ԼՈՒՆԵԵՎ

իրավաբանական գիտությունների թեկնածու Ս.Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պաշտպանությունը կայանալու է 2003 թ. հուլիսի 14-ին, ժամը 11⁰⁰ - ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՂ-ի իրավաբանական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող 001 մասնագիտական խորհրդի նիստում (375049, Երևան-49, Ալեք Մանուկյան 1)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում

Սեղմագիրն առաքված է 2003 թ. հունիսի 13-ին: Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **ՀԳՄ** Ա.Հ. ԳԱԲՈՒԶՅԱՆ

Тема диссертации утверждена на кафедре уголовного права юридического факультета Ереванского государственного университета

Научный руководитель: кандидат юридических наук, доцент А. А. ГАБУЗЯН

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор В. В. ЛУНЕЕВ
кандидат юридических наук А. А. АВЕТИСЯН

Ведущая организация: ИНСТИТУТ ГОСУДАРСТВА И ПРАВА НАН РА

Защита состоится 14 июля 2003 г. в 11⁰⁰, на заседании специализированного совета 001 ВАК по присуждению юридических ученых степеней при Ереванском Государственном университете по адресу: 375049, Ереван – 49, ул. Алека Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников ЕГУ.

Автореферат разослан 13 июня 2003.

Ученый секретарь Специализированного совета, кандидат юридических наук, доцент **ՀԳՄ** Ա.Ա.Գաբուзяն



2456-2003

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ.

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի Հանրապետությունում սկսված ժողովրդավարական, իրավական պետության ստեղծման գործընթացի կարևորագույն մասն է օրինականության և իրավակարգի ամրապնդումը, հանցավորության դեմ արդյունավետ պայքարի իրականացումը: Իսկ վերջինս անհնարին է առանց հանցավորության և դրա կառուցվածքային տարրերի մանրակրկիտ կրիմինոլոգիական ուսումնասիրությունների:

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում գրանցված հանցավորության վիճակի վերլուծությունը վկայում է բանդիտիզմների, շահադիտական դրդումներով կատարված սպանությունների, ավազակությունների, բռնությամբ զուգորդված կողոպուտների և շորթումների կտրուկ աճի մասին. առկա տվյալների համաձայն միայն 1995-1998 թվականները ներառող ժամանակահատվածում շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորությունն աճել է 1,6 անգամ (ավազակություններն աճել են 1,2, բռնությամբ զուգորդված կողոպուտները՝ 2,7, շորթումները՝ 3,2 անգամ): Ընդ որում, պետք է նկատի ունենալ այն, որ բերված տվյալները վերաբերում են միայն գրանցված հանցավորությանը, մինչդեռ առկա է նաև շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության որոշակի լատենտային մաս:

Շահադիտական-բռնի հանցավորության մասն աճը չի կարող իր ազդեցությունը չգործել հանցավորության կառուցվածքային մյուս տարրերի, հատկապես բռնության մոտիվացիայով հանցավորության աճի վրա: Ավազակություն, բռնությամբ զուգորդված կողոպուտ կամ շորթում կատարող անձանց ճնշող մեծամասնությունը հոգեբանորեն պատրաստ են անձի նկատմամբ ցանկացած բռնության կիրառման, այդ թվում նաև կյանքից զրկելու: Ուստի, շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության կրիմինոլոգիական բնութագրի բացահայտումը և դրա կանխման արդյունավետ միջոցառումների մշակումը կնպաստեն նաև բռնության մոտիվացիայով հանցավորության դեմ իրականացվող պայքարին: Սրանով է պայմանավորված շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության կրիմինոլոգիական բնութագրի բացահայտման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Միաժամանակ, հանցավորության, այդ թվում և շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության աճը և դրա դեմ իրականացվող պայքարի ոչ արդյունավետությունը հանգեցնում են հասարակության անդամների մոտ «անպաշտպանվածության» զգացման և իրավապահ մարմինների ու պետության հանդեպ վստահության կորստի: Հանցավոր ոտնձգության ենթարկվելիս՝ հասարակության անդամների մեծ մասը նախընտրում են չդիմել իրավապահ մարմիններին, ինչն էլ, իր հերթին, նպաստում է հանցավորության լատենտայնացմանն ու աճին: Ստեղծված դրությունից դուրս գալու հիմնական ուղին իրավապահ մարմինների հեղինակության բարձրացումն է, ինչը հնարավոր է միայն հանցավորության և հանցագործությունների առանձին տեսակների արդյունավետ կանխման պարագայում:

Ուսումնասիրության հրատապությունն ավելի է կարևորվում, եթե նկատի ունենանք այն, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում են շահադիտական-բռնի հանցավորության կրիմինոլոգիական հետազոտությունները. որոնք թույլ կտային գիտականորեն մշակել կանխման միջոցառումներ և արդյունավետ պայքար մղել շահադիտական - բռնի մոտիվացիայով կատարվող հանցանքների դեմ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենա-
խոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում շահա-
հաղիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության կրիմինոլոգ իսկան
բնութագրի ուսումնասիրությունն է՝ նշված հանցավորության դեմ պայքարի
արդյունավետ միջոցառումների մշակման համար: Ուսումնասիրության
խնդիրներն են՝

1. վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա բացահայ-
տել Հայաստանի Հանրապետությունում շահադիտական-բռնի մոտիվա-
ցիայով հանցավորության վիճակը, կառուցվածքը, դինամիկան,
2. բացահայտել շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ
կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-դեմոգրաֆիկ և սոցիալ-
հոգեբանական առանձնահատկությունները,
3. անդրադառնալ այս հանցավորության վիկտիմոլոգ իսկան հարցերին,
4. քննարկել շահադիտական-բռնի մոտիվացիայի առանձնահատկու-
թյունները,
5. անդրադառնալ շահադիտական-բռնի մոտիվացիայի ձևավորմանը,
6. ուսումնասիրելով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավո-
րության պատճառներն ու պայմանները՝ գիտականորեն հիմնավորված ա-
ռաջարկություններ կատարել շահադիտական-բռնի մոտիվացիայով հան-
ցավորության կանխման համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՆՈՐՈՒՅԹԸ: Սույն աշխա-
տանքով առաջին անգամ ավարտուն մեծագույն շահադիտական-բռնի մո-
տիվացիայով հանցավորության կրիմինոլոգ իսկան բնութագրի:

Աշխատանքում փորձ է արվում բացահայտել Հայաստանի Հանրապե-
տությունում շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության գար-
գացման միտումները և դրանց պատճառները, շահադիտական-բռնի մոտի-
վացիայով հանցանքներ կատարած անձանց և և դրանցից տուժողների կրի-
մինոլոգ իսկան բնութագրերը, շահադիտական-բռնի մոտիվացիայի ա-
ռանձնահատկությունները: Ընդ որում, շահադիտական-բռնի մոտիվացիա-
յով հանցավորությունը քննարկվում է որպես ինքնուրույն, պոլիմոտիվաց-
ված՝ շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցանքների
խումբ:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵ-
ՐԸ:** Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

- վերջին տարիներին շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցա-
վորությունն աճում է պետությունների ճնշող մեծամասնությունում՝ անկախ
պետության հասարակական և քաղաքական կառուցվածքից, սոցիալ-տնտե-
սական զարգացման աստիճանից, մշակութային և այլ առանձնահատկու-
թյուններից,
- Հայաստանի Հանրապետությունում հանցավորության, այդ թվում
նաև շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության պատճառնե-
րը բացատրելիս առավել հիմնավորված են «կախյալության» տեսության
դրույթները, քանի որ Հայաստանում նշված մոտիվացիայով հանցանքների
կատարումը հիմնականում պայմանավորված է հասարակության զգալի
զանգվածի աղքատացմամբ, սոցիալական անհավասարության խորաց-
մամբ, սահմանափակ նյութական միջոցներին տիրանալու համար մղվող
պայքարով,

- որոշակի փոփոխություն է նկատվում Հայաստանի Հանրապետու-
թյան տարածքում գրանցված շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցա-
վորության կառուցվածքում՝ պայմանավորված բռնությանը զուգորդված կո-
ղոպուտների ու շորթումների արագ ընթաց աճով,

- շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած ան-
ձանց շրջանում նկատվում են որոշակի սոցիալ-դեմոգրաֆիկ առանձնահատ-
կություններ: Մասնավորապես, նրանց զգալի մասի մոտ (60%) նկատվում է
անտարբեր վերաբերմունք աշխատանքի հանդեպ, «պորտաբույժ» կյանք
վարելու ձգտում,

- Էական տարբերություններ չեն նկատվում նշված մոտիվացիայով
հանցանքներ կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների պահանջ-
մունքների, շահերի, իրավագիտականության, արժեքային կողմնորոշումների
ոլորտներում, միևնույն ժամանակ շահադիտական-բռնի մոտիվացիայով
հանցանքներ կատարած անձինք իրենց անձնային հատկանիշներով որոշա-
կորեն տարբերվում են օրինապահ քաղաքացիներից: Նրանց բնորոշ է
բարձր տագնապայնությունը, զգայականությունը, աղապտացիայի ցածր
մակարդակը,

- թեև շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած
անձինք իրենց անձնային մի շարք առանձնահատկություններով տարբերվում
են օրինապահ քաղաքացիներից, սակայն սակայն նրանց կողմից հանցավոր
վարքագծի դրսևորման հիմնական պատճառը ոչ միայն անձնային առանձնա-
հատկություններն են, այլև հանցանք կատարող անձանց չբավարարված նյու-
թական, սոցիալական և այլ չբավարարված պահանջմունքները,

- ինչպես և այլ հանցագործությունների, այնպես էլ շահադիտական-
բռնի մոտիվացիայով հանցագործությունների շարժառիթներին բնորոշ է
դրանց հարաբերական հակասոցիալականությունը, նյութական և բնական
մղումների գերակայությունը հոգևորի, «տակտիկական», թուլեական մղում-
ների գերակայությունը հեռանկարային հանդեպ, շարժառիթների որոշ մա-
սի ցածր մակարդակը արժեքային համակարգում,

- թեև ավագակությունների, բանդիտիզմների, շահադիտական դրոյումնե-
րով կատարված սպանությունների, բռնությանը զուգորդված կողոպուտների և
շորթումների մոտիվացիոն ոլորտում գերակշռող շահադիտական դրոյումն է,
սակայն այն գրեթե միշտ այնքան սերտորեն է զուգակցվում բռնության շարժա-
ռիթի հետ, որ դժվար է լինում դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը:
Ուստի նշված հանցագործությունները պետք է դասվեն ոչ թե շահադիտական
կամ բռնության մոտիվացիայով կատարվող հանցանքների թվին, այլ դիտարկ-
վեն որպես ինքնուրույն, պոլիմոտիվացված՝ շահադիտական-բռնի մոտիվա-
ցիայով կատարվող հանցանքների խումբ:

- շահադիտական-բռնի մոտիվացիայի ձևավորման ժամանակ վճռո-
րոշ նշանակություն ունեն ինչպես ձևավորված պահանջմունքների, շարժա-
ռիթների և նպատակների բնույթը, այնպես էլ հրատապ պահանջմունքների
բավարարման օրինական հնարավորությունների խիստ սահմանափակու-
թյունը, իսկ մի շարք դեպքերում՝ նաև բացակայությունը,

- ավագակություններ, շահադիտական դրոյումներով սպանություններ,
բռնությանը զուգորդված կողոպուտներ և շորթումներ, բանդիտիզմներ կա-
տարող անձանց հանցավոր վարքագծի մոտիվացիայի ձևավորման ժամա-
նակ կարևոր դեր է խաղում հանցանքի կատարման դեպքում օբյեկտիվ կամ
սուբյեկտիվ գործոնների շնորհիվ քրեական պատասխանատվությունից

խոսափելու հնարավորության գ իտակցումը, ինչպես նաև բարոյական արժեքների աղճատումը.

▪ շահադիտական-բռնի մոտիվացիայի ձևավորման ժամանակ վճռորոշ դեր են խաղում հանցանք կատարող անձի արժեքային համակարգ ի խեղումները, հատկապես կապված հասարակության կողմից նախկինում պարսավանքի արժանացող արժեք-միջոցների կիրառման հետ.

▪ ավագակություններ, շահադիտական դրդումներով սպանություններ, բռնությամբ զուգ որդված կողոպուտներ և շորթումներ. բանդիտիզմներ կատարող անձանց հանցավոր վարքագծի շարժառիթների ձևավորման վրա մեծ ազդեցություն է գ ործում ինչպես մակրո, այնպես էլ հատկապես միկրոմիջավայրի (հատկապես հակասոցիալական ուղղվածություն ունեցող ռեֆերենտային խմբերի, ընտանիքի) կենսակերպը, զանգ վածային լրատվության միջոցներով բռնության քարոզչության իրականացումը.

▪ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների պատճառական մեխանիզմում կարևորվում է ինչպես անմիջականորեն հանցանքի կատարման պահին (պրոբլեմային, կոնֆլիկտային, պրոպկացիոն կամ նպաստավոր իրադրությունը), այնպես էլ հասարակությունում և անձի կենսագ ործումների ոլորտներում ձևավորված կոնկրետ կյանքի իրադրության (բնակչության կենսամակարդակի անկում, հասարակության սովոր հատվածի աղքատացում, սոցիալական անհավասարություն, մարդկային պահանջմունքների բավարարման օրինական հնարավորությունների սահմանափակություն, սոցիալական անորոշություն, հասարակության արժեքային համակարգ ի վերակառուցում, հասարակական հսկողության բացակայություն, համատարած անտարբերությունը և այլն) ազդեցությունը.

▪ ավագակությունների, շահադիտական դրդումներով սպանությունների, բանդիտիզմների, բռնությամբ զուգ որդված շորթումների և կողոպուտների կանխման համար անհրաժեշտ է մշակել կանխման միասնական քաղաքականություն, որն իր մեջ պետք է ներառի ինչպես ընդհանուր սոցիալական, հատուկ կրիմինոլոգ իական, այնպես էլ վիկտիմոլոգ իական կանխման միջոցառումներ: Մասնավորապես, այն պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

ա/ նյութապես անպահով խավի ներկայացուցիչներին նյութական օժանդակության ցուցաբերման հստակ մեխանիզմների մշակում.

բ/ գ ործագործիչների մասնագ իտական վերապատրաստում և աշխատանքով ապահովում.

գ/ «անտունների», թափառաշրջիկների և մուրացկանների հայտնաբերում, հաշվառում և հնարավորության սահմաններում հանրակացարանային տիպի օթևանով ապահովում կամ պետության կողմից ստեղծված հատուկ հաստատություններում (ծերանոցներ, մանկատներ, պետության հովանավորության ներքո գ տնվող հատուկ ուսումնադաստիարակչական հիմնարկներ կամ համանման հաստատություններ) տեղավորում.

դ/ միզ թացիոն պրոցեսների բացասական ազդեցության թուլացում.

ե/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչության, հատկապես երիտասարդների և անչափահասների ազատ ժամանցի ոլորտի կազմակերպում.

զ/ իրավապահ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ջանքերով քրեաձին վայրերի հայտնաբերում և չեզոքացում.

է/ թմրամոլների և ալկոհոլիկների, հոգ եկան անոմալիաներով տառապող անձանց հայտնաբերում, հաշվառում և բուժում.

ը/ ալկոհոլային հարբածության վիճակում գ տնվող անձանց հասարակական վայրերից հնարավորինս արագ հեռացում՝ ինչպես նրանց կողմից, այնպես էլ նրանց նկատմամբ հնարավոր ոտնձգ ությունները կանխելու համար.

թ/ իրավապահ մարմինների կողմից գեների հայտնաբերման և առգրավման ժամանակ առկա թերությունների վերացում.

ժ/ հանցավոր խմբերի ստեղծման կանխում, ինչպես նաև արդեն ձևավորված հանցավոր խմբերի հայտնաբերում և վերացում.

ի/ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների բացահայտման և դրանք կատարած բոլոր անձանց քրեական պատասխանատվության և պատժի ենթարկման ժամանակ տեղ գ տած թերացումների վերացում.

լ/ իրավապահ մարմինների կողմից քաղաքացիներից ստացված հայտարարությունների ընդունման ու դրանց ընթացք տալու ժամանակ տեղ գ տած թերությունների, գ ործի նախնական քննության կամ դատական քննության ժամանակ հնարավոր քաշքշուկի վերացում.

խ/ ուղղիչ հիմնարկներից դուրս եկած անձանց նկատմամբ արդյունավետ հսկողության սահմանում և հասարակությունում նրանց ինտեգ ռման ապահովում.

ծ/ իրավախախտումների հանդեպ հասարակության անհանդուրժողականության, բնակչության ակտիվության բարձրացում.

կ/ բնակչությանը հանցագ ործությունների, քրեաձին վայրերի, հանցագ ործություններից պաշտպանվելու մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովում: Մասնավորապես, շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցագ ործությունների դեպքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հատկապես քաղաքներում բնակվող երիտասարդ տղամարդկանց (որպես առավել վիկտիմիզացված խմբի), որոշակի մասնագ իտության տեր անձանց (օրինակ՝ բանկերի, տարադրամի փոխանակման կետերի աշխատողներին, տաքսու վարորդներին), և նրանց համար պետք է մշակվեն ցուցումներ, որոնք նրանց թույլ կտան, ոտնձգ ության ենթարկվելիս, դրսևորելու ճիշտ վարքագ իծ,

▪ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների կանխման համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ մարմիններ (գ աղութներում գ ործող հոգ եբանական ծառայություններ, հասարակությունում նախկին դատապարտյալների ինտեգ ռումն ապահովող պետական հոգ ածության ներքո գ տնվող հիմնարկություն կամ հասարակական կազմակերպություն), որոնք հնարավորություն կընձեռեն նվազեցնել հանցագ ործության պատճառ կամ պայման հանդիսացող երևույթների քրեաձին ազդեցությունը,

▪ իրավապահ մարմինների և պետության հանդեպ տուժողների վստահությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ մարմին, որը կապահովի տուժողների կրած նյութական և բարոյական վնասների հատուցումը: Նշված մարմնի ստեղծման համար կարելի է կիրառել Անգ լիայում կամ Իտալիայում նշված ոլորտում առկա փորձը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ուսումնասիրության ընթացքում օգ տագ ործվել են վիճակագ ռական, ընտրանքային, համեմատական, հոգ եբանական և այլ մեթոդներ:

Ներկայացված աշխատանքում ուսումնասիրվող խնդրի տեսաիրական հիմքն են կազմում կրիմինոլոգ իայի, հոգ եբանության, հոգ եբուժության և սոցիոլոգ իայի ոլորտներում հայրենական և արտասահմանյան հայտնի

գ իտնականների աշխատությունները: Ատենախոսությունում օգ տագ ործվել են նաև ՄԱԿ-ի, մի շարք պետությունների վիճակագրական բյուրոների և ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրված վիճակագրական տվյալներն ու դատական պրակտիկայի նյութերը:

Դատապարտյալների և օրինապահ քաղաքացիների շրջանում անցկացվել են հոգ երանական հարցումներ, որոնց արդյունքները տեղ են գ տել ատենախոսության մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆԾԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունում արված հետևություններն ու առաջարկությունները կարող են կիրառվել ինչպես գ ործնական, այնպես էլ տեսական (գ իտական) նպատակներով: Ուսումնասիրության ժամանակ կիրառված նյութերը, ինչպես նաև կատարված հետազոտության արդյունքները կարող են օգ տագ ործվել «Կրիմինոլոգ իս» և «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» դասընթացների դասավանդման ժամանակ: Ատենախոսության մեջ շարադրված մոտեցումները կնպաստեն ինչպես պրակտիկ աշխատողների կողմից հանցագործությունների ճիշտ որակմանը, այնպես էլ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի մղմանը, կանխման արդյունավետ միջոցառումների մշակմանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ անցկացվել են դրա քննարկումն ու գ րախոսությունը: Թեկնածուական ատենախոսության առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլումն են գ տել հեղինակի հրապարակումներում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում ներկայացված գեկուցումներում:

ԱՇՆԱՍԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գ լուխներից, հինգ պարագրաֆներից, եզրափակումից և օգ տագ ործված գ րականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի հրատապությունը, որոշակիացվում են դրա նպատակն ու խնդիրները, գ իտական նորույթը, ցույց է տրվում ուսումնասիրության գ ործնական-կիրառական նշանակությունը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ուրվագծվում աշխատության մեթոդաբանական և տեսական հիմքերը, ստացված արդյունքների փորձարկումը:

Առաջին գ լուխը՝ «Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության կրիմինոլոգ իական բնութագիրը» բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում ատենախոսի կողմից վերլուծության է ենթարկվում Հայաստանի Հանրապետությունում 1990-1998 թվականները ներառող ժամանակահատվածում գ ռանցված շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության վիճակը, կառուցվածքը և դինամիկան, սահմանվում շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցանքների շրջանակը: Մասնավորապես, նշվում է, որ թեև կրիմինոլոգ իական գ րականության մեջ դասակարգված շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների շարքին են դասվում շահադիտական դրդումներով սպանությունները, բանդիտիզմները, ավազակությունները, բռնությամբ գուց որդված կողոպուտներն ու շորթումները, սակայն այս շարքը սպառիչ չէ և պետք է համարվի շահադիտական դրդումներով կատարվող ու բռնությամբ գուց որդված այնպիսի հանցանքներով, ինչպիսիք են շահադիտական

դրդումներով խոշտանգ ումն ու անձի առողջությանը ծանր վնաս հասցնելը: Միաժամանակ, նկատի ունենալով այն, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքում շահադիտական դրդումներով անձի առողջությանը ծանր վնաս հասցնելը դիտվում է որպես ծանրացնող հանցամանքով հանցակազմ, ատենախոսն առաջարկում է նման կարգ ավիճակ սահմանել նաև նույն դրդումներով կատարվող խոշտանգ ման համար:

Վերլուծության ենթարկելով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության ընդհանուր վիճակը՝ ատենախոսը նշում է, որ 1990-1998 թվականներն ընկած ժամանակահատվածում նկատվում է նշված հանցավորության աննախադեպ աճ. 1990 թվականի համեմատ 1992 թվականին շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորությունը բացարձակ թվերով աճել է 1,6, 1996 թվականի համեմատ 1998-ին՝ 1,5 անգ ամ: Նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը չի կարող դասվել ո՛չ զարգացած պետությունների շարքին, որտեղ գ երակշռում են շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցանքները, և ո՛չ էլ հետամնաց կամ զարգացման ցածր մակարդակի վրա գ տնվող պետությունների շարքին, որոնցում նկատվում է բռնության մոտիվացիայով հանցավորության աճ, ատենախոսը, շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության պատճառները վերլուծելիս, ղեկավարվում է զարգացող երկրներում հանցավորության պատճառները բացատրող երկու հիմնական՝ «կախյալության» և «մոդեռնիզացիայի» տեսություններով: «Կախյալության» տեսության կողմնակիցների կարծիքով զարգացող երկրներում հանցավորության հիմնական պատճառներն են՝ աղքատությունը, սոցիալական անհավասարությունը, բարիքների և ուսուրսների անհավասարակշիռ բաշխումը, միևնույն «մոդեռնիզացիայի» տեսության կողմնակիցների կարծիքով՝ գ իտատեխնիկական, տնտեսական, հասարակական զարգացումը: Քննության առնելով վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության աճի պատճառները՝ ատենախոսը գ տնում է, որ մեր երկրում առավել ընդունելի են «կախյալության» տեսության դրույթները, քանի որ ինչպես և ողջ հանցավորության, այնպես էլ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության աճը պայմանավորված է անկախության ձեռք բերումից հետո մեր նորաստեղծ պետության հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղ գ տած ցնցումային փոփոխություններով, համատարած գ ործազրկությամբ, աղքատության տարածմամբ, հասարակության խիստ շերտավորմամբ, սոցիալական անհավասարության խորացմամբ, և դրա հետ կապված՝ հասարակությունում տեղ գ տած սոցիալ-հոգ երանական բացասական փոփոխություններով:

Անդրադառնալով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության կառուցվածքային փոփոխություններին՝ ատենախոսը նշում է, որ պետական ունեցվածքի պահպանման նկատմամբ տնտեսավարող և իրավապահ մարմինների վերաբերմունքի փոփոխության, ինչպես նաև տնտեսության մեջ մասնավոր սեփականության տեսակարար կշռի ավելացման հետևանքով պետական ունեցվածքի դեմ ուղղված ավազակությունների նվազմանը գուց ընթաց նկատվում է քաղաքացիների ունեցվածքի դեմ ուղղված ավազակությունների, բռնությամբ գուց որդված շորթումների և կողոպուտների աճ: Միայն 1995-1998 թվականները ընդգրկող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքում շորթումներն աճել են 3,25, իսկ բռնությամբ գուց որդված շորթումները 2,7 անգ ամ: Ընդ որում, բռնությամբ գուց որդված կողոպուտի աճի տեմպերը 2 անգ ամ գ երազան-

ցում են կողոպուտի աճի տեմպերին: Միաժամանակ, վերլուծության ենթարկելով ՄԱԿ-ի կողմից մի շարք պետություններում գրանցված շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցանքների վերաբերյալ ներկայացված տվյալները՝ ատենախոսը նշում է, որ ուսումնասիրվող հանցագործությունների աճ է նկատվում պետությունների ճնշող մեծամասնությունում անկախ պետության հասարակական և քաղաքական կառուցվածքից, սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանից, մշակութային և այլ առանձնահատկություններից:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ պարագրաֆը նվիրված է շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-դերային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանը:

Մասնավորապես, շահադիտական դրդումներով սպանություններ, ավազակություններ, բանդիտիզմներ, բռնությամբ զուգ որդված կողոպուտներ և շորթումներ կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական մի շարք առանձնահատկությունների (սեռ, տարիք, կրթություն, զբաղվածություն) ատենախոսի կողմից կատարված ուսումնասիրությունում նշված հանցանքներն առավել հաճախ կատարվում են 18-30 տարեկան, միջնակարգ կրթություն ունեցող, ոչ մի տեղ չաշխատող կամ չսովորող տղամարդկանց կողմից: Բացատրելով նշված խմբի կրիմինալ բարձր ակտիվության պատճառները, ատենախոսը նշում է, որ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքների կատարմանը կանանց ցածր մեղք ռավվածությունը պայմանավորված է ինչպես նրանց կենսաբանական, այնպես էլ դեռևս մանկուց սերմանվող սեռային-դերային առանձնահատկություններով (եթե մեր հասարակությունում տղաների դաստիարակության ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում նրանց ֆիզիկական ուժի զարգացմանը, ապա աղջիկները դաստիարակվում են որպես ապագա մայրեր, ընտանիքի պահպաններ): Տարբեր է նաև հասարակության դիրքորոշումը նրանց նկատմամբ. եթե տղաների նկատմամբ դրսևորվում է առավել ազատական, հանդուրժողական մոտեցում, ապա աղջիկների հանդեպ առավել ուժեղ է հասարակության ոչ ֆորմալ հսկողությունը: Այս ամենն էլ հետագայում հանգեցնում է նրան, որ կանայք և տղամարդիկ հայտնվում են տարբեր սոցիալ-հոգեբանական իրադրություններում. կանայք ձգ տում են ապահով, կայուն, կոնֆլիկտներից ազատ վիճակի, մինչդեռ տղամարդիկ՝ նվաճումների և հասարակության մեջ ինքնահաստատման, ինչն էլ հաճախ իրագործում են հանցավոր ճանապարհով: Ինչ վերաբերում է երիտասարդների կողմից հանցանքների առավել հաճախ կատարմանը, ապա ատենախոսը մտնա վիճակը պայմանավորում է տարիքի աճին զուգ ընթաց անձի մոտ կատարվող կենսաբանական փոփոխություններով, սոցիալական և նորմային անցումներով, կենսափորձի հարստացմամբ, նոր սոցիալական վիճակների ձեռք բերմամբ (ընտանիք, երեխաներ, աշխատանք), որոնք էլ նրան զերծ են պահում հանցավոր վարքագծի դրսևորումից: Քննարկելով կրթական ցածր մակարդակ ունեցող անձանց բարձր կրիմինալ ակտիվության պատճառները, ատենախոսը նշում է, որ ցածր կրթական մակարդակ ունեցող անձին, որպես կանոն, բնորոշ են պահանջմունքների և ձգտումների պրիմիտիվությունը, նեղ մտահորիզոնը, կոպտության և ինքնազայման ցածր մակարդակը, մինչդեռ բարձր կրթական մակարդակը անձի մոտ ձևավորում է հոգևոր պահանջմունքների լայն շրջանակ, ընդգրկում աշխարհայացք: Բացի այդ, բարձրագույն կրթությունը անձին հնարավորություն է ընձեռում զբաղեցնել պաշտոններ, բարձր որակավորում պահան-

ջող բարձր վարձատրվող աշխատանքներ և դրանց շնորհիվ լուծել անհրաժեշտ նյութական միջոցների ձեռք բերման խնդիրը:

Վերլուծության ենթարկելով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-դերային առանձնահատկությունները՝ ատենախոսը նշում է, որ նշված անձանց զգալի մասի մոտ նկատվում է անտարբեր վերաբերմունք աշխատանքի հանդեպ, «պրոտաբոյժ» կյանք վարելու ձգտում: Դրա վկայությունն են շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած գործազուրկների շրջանում ատենախոսի կողմից անցկացված հարցման արդյունքները: Համաձայն այդ արդյունքների՝ հարցման ենթարկվածների միայն 40% են, որպես իրենց զբաղվածության բացակայության պատճառներ, նշել այնպիսի օբյեկտիվ գործոններ, ինչպիսիք են համատարած գործազրկությունը, աշխատատեղերի սահմանափակությունը, պահանջվող աշխատատեղերին իրենց մասնագիտական անհամապատասխանությունը, մինչդեռ 60%-ը իրենց զբաղվածության բացակայությունը պայմանավորել են սուբյեկտիվ գործոններով (իրենց հոգեպես և նյութապես բավարարող աշխատանքի կամ աշխատելու ցանկության բացակայությամբ):

Սույն պարագրաֆում ատենախոսի կողմից կարևորվում է հատկապես հանցանքներ կատարող անձանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բացահայտումը, ինչը ենթադրում է ինչպես նրանց պահանջմունքների, շահերի, արժեքային կողմնորոշումների, իրավագիտականության, այնպես էլ բնութագրիչ անձնային հատկանիշների ուսումնասիրություն: Ատենախոսը, համաձայնելով Վ.Ն.Կուդրյավցևի, Վ.Ե. Էմինովի դիրքորոշման հետ, նշում է, որ անձի ոչ սոցիալական կարգավիճակը, ոչ հանցավոր վարքագծի դրսևորման պատճառ հանդիսացող օբյեկտիվ կամ սուբյեկտիվ այլ գործոնները չեն կարող հանգեցնել հանցանքի կատարման՝ առանց հանցանք կատարող անձի հոգեբանական ոլորտով անցնելու, հոգեբանական կարգավիճակ ձեռք բերելու:

Վերլուծության ենթարկելով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների հոգեբանական առանձնահատկությունները՝ ատենախոսը գտնում է, որ էական տարբերություններ չեն նկատվում նշված անձանց պահանջմունքների, շահերի, իրավագիտականության և արժեքային կողմնորոշումների ոլորտներում: Ուսումնասիրվող երկու խմբերի մոտ էլ նկատվում է նյութական պահանջմունքների գերակայություն հոգևոր պահանջմունքների (ատենախոսի կողմից անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքները վկայում են, որ նյութական պահանջմունքների գերակայություն է նկատվում հարցման ենթարկված օրինապահ քաղաքացիների 91% և շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց 94%-ի մոտ), անձնական շահերի գերակայություն հասարակականի նկատմամբ: Ծախադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց միայն 27%-ի մոտ են նկատվել «դեֆորմացված» և «այլատեսակ» պահանջմունքներ, մինչդեռ մյուսները հանցավոր վարքագիծ են դրսևորել իրենց համար կենսական կարևորություն ունեցող պահանջմունքների բավարարման համար: Ավելին, եթե 1980-ական թվականներին շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց մեծամասնությունը հանցավոր ոտնձգության ժամանակ ղեկավարվում էր ուղեղային անձնական և պրետիթային պահանջմունքներով, և միայն մի փոքր զանգվածը (2%)¹ նորմալ նյութական

¹ Дубинин Н.П., Карпец И.И., Кудрявцев В.Н. Генетика, поведение, ответственность. М., 1989, стр. 211-219.

պահանջմունքներով ապա այժմ ճշված մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց ճնշող մեծամասնությունը՝ 51%, իրենց կողմից հանցավոր վարքագծի դրսևորման հիմնական պատճառ են համարում կենսական նյութական պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց արժեքային կողմնորոշումներին, ապա ատենախոսը, ամփոփելով իր կողմից Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայով կատարված ուսումնասիրության արդյունքները, ճշում է, որ թեև առաջին հայացքից էական տարբերություններ չեն նկատվում շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների արժեքային համակարգերի միջև, սակայն դրանց առավել մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ նյութապես ապահովված լինելը, նյութական միջոցների ձեռք բերման հնարավորությունը օրինապահ քաղաքացիների համեմատ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց ավելի մեծ խնդիր համար են հանդիսանում կարևորագույն արժեքներ: Մասնավորապես, մասն դիրքորոշում են դրսևորել շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց 37%, մինչդեռ օրինապահ քաղաքացիների միայն 16%-ը:

Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները վերլուծելիս, ատենախոսը ճշում է, որ քննարկվող մոտիվացիայով հանցանքներ կատարող անձանց բնորոշ է բարձր տագնապայնությունը, զգայականությունը, աղապտացիայի ցածր մակարդակը: Ատենախոսի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ բարձր տագնապայնությամբ են օժտված շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց 36%, մինչդեռ օրինապահ քաղաքացիների միայն 12%-ը: Ինչ վերաբերում է այնպիսի անձանցին հատկանիշի, ինչպիսին ազդեցիկությունն է, ապա թեև կատարված ուսումնասիրության արդյունքներով օրինապահ քաղաքացիների և շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց միջև էական տարբերություններ չեն նկատվում, սակայն, ըստ ատենախոսի, դա պայմանավորված է հարցման ենթարկված դատապարտյալների ոչ անկեղծ պատասխաններով, իրենց արդարացնելու ձգտմամբ: Ասվածի վկայությունն է այն, որ «Ինձ թվում է, որ ես ընդունակ չեմ հարվածել մարդուն» հարցին դրական են պատասխանել օրինապահ քաղաքացիների 53%, մինչդեռ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց 50%, այսինքն իրականում բռնություն գործադրած անձանց մի ստվար զանգված տվել է բացասական պատասխան:

Ամփոփելով պարագրաֆը՝ ատենախոսը ճշում է, որ թեև շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձինք իրենց անձնային մի շարք առանձնահատկություններով տարբերվում են օրինապահ քաղաքացիներից, սակայն նրանց կողմից հանցավոր վարքագծի դրսևորման հիմնական պատճառը ոչ միայն այդ անձնային առանձնահատկություններն են, այլև հանցանք կատարող անձանց չբավարարված նյութական, սոցիալական կամ այլ պահանջմունքները:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Շահադիտական-բռնի մոտիվացիայի առանձնահատկությունները», բազմակողմանիորեն քննության են առնվում ինչպես շահադիտական-բռնի մոտիվացիայի, այնպես էլ դրա ձևավորման առանձնահատկությունները: Այս գլուխը ևս բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում, մանրակրկիտ վերլուծության ենթարկելով շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցանքների ժամանակ առավել հաճախ հանդիպող շարժառիթները, ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ ինչպես և այլ հանցագործությունների, այնպես էլ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների շարժառիթներին բնորոշ է դրանց հարաբերական հավաստիացվածությունը, նյութական և բնական մղումների գերակայությունը հոգևորի, «տակտիկական», րոպեական մղումների գերակայությունը հեռանկարայինի հանդեպ, շարժառիթների որոշ մասի ցածր մակարդակը արժեքային համակարգում:

Մասնավորապես, ատենախոսը կարծում է, որ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց ճնշող մեծամասնությունը նախապատվությունը տալիս է անձնական, և ոչ թե հասարակական շահերին: Միաժամանակ, ատենախոսը կարծում է, որ ճշված իրողությունը ոչ թե հանցանք կատարող անձանց առանձնահատկությունն է, որ մեր հասարակության մի ստվար հատվածի դիրքորոշումը: Վերլուծության ենթարկելով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց մղումները, ատենախոսը ճշում է, որ նրանց մոտ գերակշռողը նյութական և բնական մղումներն են՝ հատկապես շահադիտական մղումը (նյութական միջոցների ձեռք բերում, կուտակում, կենսաֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարում և այլն): Իհարկե, մի շարք դեպքերում շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունները կատարվում են նաև հոգևոր մղումներով, սակայն դրանք հիմնականում արտահայտվում են կեղծ ինքնահաստատման, կեղծ արդարության վերականգման, սուտ ընկերասիրության, զվարճանքի շարժառիթներով, որոնք դժվար թե կարելի է դասել բարձր հոգևոր մղումների շարքին: Վերլուծության ենթարկելով շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց մոտիվացիոն ոլորտը՝ ատենախոսը ճշում է, որ այդ անձանց բնորոշ է րոպեական պահանջմունքների գերակայությունը հեռանկարայինի հանդեպ, մասնավորապես, հանցավոր վարքագիծ դրսևորելով, անձը ձգտում է բավարարել իր անմիջական, րոպեական ցանկությունները՝ հաճախ դրանով իսկ խոչընդոտներ ստեղծելով իր հեռանկարային պահանջմունքների բավարարման համար: Նման պատկերն առավել հաճախ դիտարկվում է անչափահասների կողմից կատարվող ավազակությունների, բռնությամբ զուգ որդված կողոպուտների և շորթումների, շահադիտական դրդումներով սպանությունների ժամանակ, որոնք ավելի շատ կրում են իրադրային, իմպուլսիվ բնույթ և առավել հաճախ դետերմինացվում են էմոցիոնալ, քան ռացիոնալ մղումներով: Ատենախոսը, քննության առնելով շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցանքների շարժառիթների հարաբերակցությունը արժեքային համակարգի առումով, լիովին համաձայնվում է Ա.Հ. Գաբուզյանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, որ հանցագործությունների շարժառիթների որոշ մասն ունեն ցածր մակարդակ, սակայն ոչ թե սոցիալական արժեքների համակարգի, այլ համընդհանուր փիլիսոփայական առումով²:

Անդրադառնալով ավազակությունների, բանդիտիզմների, շահադիտական դրդումներով սպանությունների, բռնությամբ զուգ որդված կողոպուտների և շորթումների մոտիվացիայի քննարկմանը՝ ատենախոսը գտնում է, որ ճշված հանցագործությունների մոտիվացիոն ոլորտը պոլիմոտիվացված

² Габузян А.А. Должностные преступления: криминологический и уголовно-правовой аспекты субъективной стороны. Ереван. 2000, стр. 46.

է, քանի որ նշված հանցանքների կատարման մոտիվացիոն ոլորտում միա-
ժամանակ առկա են թե բռնության և թե շահադիտական շարժառիթները:
Համաձայնվելով կրիմինոլոգ իսկան գրականության մեջ արտահայտված
այն տեսակետին, որ նշված մոտիվացիայի դեպքում առավել հաճախ հան-
դիպող առաջատար շարժառիթը շահադիտականն է, ատենախոսը անըն-
դունելի է համարում այդ չափանիշից ելնելով նշված հանցագործություննե-
րի խումբը շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործություննե-
րի թվին դասելը: Ատենախոսը նշում է, որ շահադիտական դրդումներով
սպանությունների, ավազակությունների, բանդիտիզմների և հատկապես
բռնությամբ զուգ որդված կողոպուտների և շորթումների դեպքում բավակա-
նին մեծ թիվ են կազմում այն դեպքերը, երբ առաջատարը բռնության մոտի-
վացիան է: Սակայն ամենակարևորն այն է, որ անկախ այն հանգամանքից,
թե ուսումնասիրվող հանցագործությունների մոտիվացիոն ոլորտում որ
շարժառիթն է առաջատար՝ շահադիտականը թե բռնությանը, նշված շար-
ժառիթները այնքան սերտորեն են զուգ ակցվում, որ դժվար է լինում դրան-
ցից որևէ մեկին նախապատվություն տալը: Ուստի նշված հանցագործու-
թյունները չի կարելի դասել ոչ շահադիտական և ոչ էլ բռնության մոտիվա-
ցիայով կատարվող հանցանքների թվին. դրանք պետք է դիտարկվեն որ-
պես ինքնուրույն, շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հան-
ցագործությունների խումբ:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում ատենախոսն
անդրադառնում է շահադիտական-բռնի մոտիվացիայի ձևավորման առանձ-
նահատկությունների քննարկմանը:

Քննության առնելով շահադիտական-բռնի մոտիվացիայի ձևավորման
առանձնահատկությունները՝ ատենախոսը նշում է, որ բանդիտիզմների, շա-
հադիտական դրդումներով սպանությունների, ավազակությունների, բռնու-
թյամբ զուգ որդված շորթումների և կողոպուտների դեպքում, որպես հանցա-
վոր վարքագծի շարժառիթի ձևավորման սկզբնադրյուր, հանդես է գալիս
անձի իրական կամ կարծեցյալ պահանջմունքների և դրանց բավարարման
օրինական հնարավորությունների միջև առկա անհամապատասխանությունը:
Մասնավորապես, շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ
կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների շրջանում ատենախոսի
կողմից անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ հարցման են-
թարկված անձանց 70%-ը, որպես իրենց հանցավոր վարքագծի դրսևորման
պատճառ, նշել են օրինական ճանապարհով իրենց նյութական պահանջ-
մունքների բավարարման օբյեկտիվ անհնարինությունը, ընդ որում նրանց
53%-ը նման վիճակը կապել է աշխատանքի բացակայության, 47%-ը՝ ձեռք
բերվող նյութական միջոցների և իրենց պահանջմունքների բավարարման
հնարավորությունների միջև գոյություն ունեցող անհամապատասխանու-
թյան հետ:

Ավազակություններ, շահադիտական դրդումներով սպանություններ,
բռնությամբ զուգ որդված կողոպուտներ և շորթումներ, բանդիտիզմներ կա-
տարող անձանց հանցավոր վարքագծի մոտիվացիայի ձևավորման ժամա-
նակ կարևորվում է նաև անձի իրավագիտական և հատկապես՝ բարո-
յականության դերը: Նշված մոտիվացիայով հանցանքներ կատարած ան-
ձանց մեծ մասը հույս է ունեցել խուսափել պատասխանատվությունից՝ հիմն-
վելով հիմնականում սուբյեկտիվ գործոնների (կաշառք տալու, հովանավոր-
չության և այլն) վրա: Պետք է նշել, որ նման դիրքորոշման ձևավորմանը
նպաստում է մեր հասարակությունում տարածում ստացած այն պատկերա-

ցումը (ընդ որում ոչ անհիմն), որ գումարի միջոցով կարելի է կարգավորել
ցանկացած հարց:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ սույն իրավագիտականության
խեղումները չեն կարող հանգեցնել հանցավոր վարքագծի դրսևորման:
Ըստ ատենախոսի, հանցանքի կատարման որոշումը ավելի շատ պայմանա-
վորված է հանցանք կատարող անձի կենսափորձով, արժեքային կողմնորո-
շումներով, անձնային հատկանիշներով և բարոյականությամբ: Իսկ վերջին
տարիներին մեր հասարակության արժեքային համակարգում կատարված
բացասական փոփոխությունները հանգեցրել են ոչ միայն հանցանքներ կա-
տարած անձանց, այլև մեր բնակչության զգալի մասի մոտ բարոյականու-
թյան անկման, նախկինում պարսավելի արարքների (այդ թվում նաև որոշ
հանցագործությունների) արդարացման, ցանկալի նպատակին հասնելու
համար տարաբնույթ բացասական սոցիալական ուղղվածություն ունեցող
արժեք-միջոցների կիրառման արդարացման:

Սույն պարագրաֆում, ատենախոսը ուշադրություն է դարձնում նաև
հանցավոր վարքագծի դրսևորման պրոցեսում դետերմինացնող նշանակու-
թյուն ունեցող այնպիսի երևույթների քննարկմանը, ինչպիսիք են անձի կեն-
սակերպը, ընտանիքը, ռեֆերենտային խմբերը, լրատվամիջոցները, կոնկ-
րետ իրադրությունը: Ատենախոսը կարևորում է հատկապես հանցանք կա-
տարող անձի ընտանիքի և այն ռեֆերենտային խմբերի դերը, որոնք ունեն
հակասոցիալական ուղղվածություն: Ծախադիտական-բռնի մոտիվացիայով
հանցագործությունների ատենախոսի կողմից կատարված ընտրանքային
ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված մոտիվացիայով հանցանք-
ներ կատարած անձանց ընտանիքներում, որպես կանոն, նկատվում է հա-
կահասարակական հայացքների, սովորությունների գ երակայություն, ար-
համարհական վերաբերմունք հասարակական շահերի հանդեպ, ներքնա-
նեկան հուզական կապերի բացակայություն կամ թույլ զարգացում, ակոհո-
լի հաճախակի գործածում, կոնֆլիկտների լուծման ժամանակ բռնության
գործադրում: Ավելին, ավազակություններ կատարած անձանց 2%, բռնու-
թյամբ զուգ որդված կողոպուտներ կատարած անձանց՝ 3%, շահադիտական
դրդումներով սպանություններ կատարած անձանց 14%-ի ընտանիքի ան-
դամներից որևէ մեկը դատվածություն է ունեցել բռնության գործադրմամբ
հանցանքի կատարման համար: Ընդ որում, ընտանիքում բռնության գործա-
դրմամբ հանցանքի կատարման փորձի բացասական ազդեցությունն առա-
վել ակնհայտ է շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատա-
րած կանանց վրա. կատարված ուսումնասիրության արդյունքներով նրանց
40%-ի ընտանիքի անդամներից որևէ մեկը (հայրը, ամուսինը կամ եղբայրը)
դատապարտված է եղել բռնության գործադրմամբ հանցանքի կատարման
համար:

Ատենախոսն անդրադառնում է նաև շահադիտական-բռնի մոտիվա-
ցիայի ձևավորման վրա զանգվածային լրատվության միջոցներով բռնու-
թյան գործադրման դեպքերի հաճախակի ցուցադրման ազդեցության վերլու-
ծությանը: Ատենախոսի կարծիքով հեռուստատեսությամբ անընդմեջ ցուցա-
դրվող ֆիլմերը, որոնցում հաջողության հասնելու ամենակարգ ուղին հան-
ցանքի (հիմնականում՝ բռնության գործադրմամբ) կատարումն է, հասարա-
կության անդամներին աստիճանաբար պատրաստում են նրան, որ բռնու-
թյունը դիտեն որպես բնականոն երևույթ: Ընդ որում, ատենախոսը նշում է, որ
հեռուստատեսությամբ բռնության գործադրման տեսարաններ պարունա-
կող ֆիլմերի հաճախակի ցուցադրումը անմիջական բացասական ազդե-

ցություն է գ ործում հատկապես մանկահասակների և անչափահասների հոգ եկանի, սոցիալ-հոգ եքանական և անձնային հատկանիշների ձևավորման, նրանց կողմից վարքագծի որոշակի ձևերի յուրացման վրա. բռնության գ ործադրման տեսարաններ դիտելիս՝ արագ տպավորվող անչափահասը մտովի ընդգրկվում է ցուցադրվող վարքագծին, իսկ հետագայում՝ ընդօրինակում այն և կիրառում համանման իրադրություններում:

Այդ առումով, ատենախոսի կարծիքով, մտահոգ իչ իրադրություն է ստեղծվել այսօր մեր հանրապետությունում. ատենախոսը նշում է, որ իր կողմից կատարված դիտարկման արդյունքներով միայն մեկ ժամվա ընթացքում (ժամը 20.00-ից մինչև 21.00) Հայաստանի Հանրապետության տարածքում հետաքննվող այիքներով ցուցադրվել է արյունոտ («մորթի») երեք, ծեծի մեկ տեսարան, հրազենի գ ործադրման ութսունվեց, սառը զենքի գ ործադրման չորս, նոսրակի պայթեցման երկու, որպես զենք ծառայող առարկաների գ ործադրման տասը, ավազակության կատարման երկու, սպանությունների տասներկու դեպք: Ատենախոսը կարծում է, որ բռնության գ ործադրման դեպքերի ցուցադրման մասն հաճախակաճությունը, նպաստելով անձի ենթոց իտակցական մակարդակում բռնության գ ործադրման վարքագծի ստերեոտիպների ձևավորմանը, կարճ ժամկետում կհանգեցնի ավելի մեծ թվով անչափահասների ներգրավման բռնի և շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների կատարմանը:

Օահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների պատճառական մեխանիզմում կարևորվում է ինչպես անմիջակաճորեն հանցանքի կատարման պահին, այնպես էլ հասարակությունում և անձի կենսագ ործունեություն ոլորտներում ձևավորված կոնկրետ կյանքի իրադրության ազդեցությունը:

Ատենախոսը նշում է, որ նշված մոտիվացիայով հանցագ ործությունների վրա մոտիվացիոն առումով բացասաբար են անդրադաճում մեր հասարակությունում ձևավորված այնպիսի երևույթներ, ինչպիսիք են բնակչության կենսամակարդակի անկումն ու հասարակության մի ստվար հատվածի աղքատացումը, սոցիալական անհավասարությունը, մարդկային պահանջմունքների բավարարման օրինական հնարավորությունների սահմանափակությունը, սոցիալական անորոշությունը, հասարակության արժեքային համակարգի վերակառուցումը, հասարակական հսկողության բացակայությունն ու համատարած անտարբերությունը և այլն:

Միաժամանակ, հանցավոր վարքագծի դրսևորման մտադրության ձևավորման և հանցանքի կատարման որոշման կայացման առումով կարևոր նշանակություն ունի նաև անմիջակաճորեն հանցագ ործության կատարման պահին առկա պրոբլեմային, կոնֆլիկտային, պրովոկացիոն կամ նպաստավոր իրադրությունը: Ատենախոսը նշում է, որ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների (հատկապես ինքնահաստատման և վրեժի շարժառիթներով կատարվող ավազակությունների, բռնությանը զուգ որդված կողոպուտների և շորթումների, շահադիտական դրոմներով սպանությունների) դեպքում պրոբլեմային կամ կոնֆլիկտային իրադրություններում հայտնված, հանցանք կատարող անձի ֆրուստրացված էմոցիոնալ հագ եցած, չգ իտակցված ապրումները, հաճախ, արտաքին հոգ եներգ ործում գ ործոմների ազդեցությամբ, առանց կշռադատվելու և գ նահատվելու, մարմնավորվում են հենց սուբյեկտի համար անսպասելի, բռնության գ ործադրմանը իմպուլսիվ գ ործողություններում: Փաստորեն, նշված գ ործողությունների դրսևորման ակտիվությունն առաջանում է կոնկրետ իրադ-

րությունում հրատապ պահանջմունքի ազդեցությամբ՝ շրջանցելով գ իտակցված կամային հսկողությունը, առանց հաշվի առնելու սոցիալական նորմերը, կյանքի փորձը, վարքագծի հնարավոր հետևանքները: Օահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների ատենախոսի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ նշված մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց շուրջ 32%-ի հանցավոր վարքագծի ինչ կրել է իրադրային-իմպուլսիվ բնույթ:

Միաժամանակ, շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց 34%-ի վարքագծի վրա էլ դետերմինացնող ազդեցություն է գ ործել պրովոկացիոն իրադրությունը: Օրինակ ավազակություններ կատարած անձանց 35%, բռնությամբ զուգ որդված կողոպուտներ կատարած անձանց 22%, բռնությամբ զուգ որդված շորթումներ կատարած անձանց 18,5%-ի կողմից հանցավոր վարքագծի դրսևորումը պայմանավորված է եղել տուճողի պրովոկացիոն վարքագծով:

Աշխատանքի վերջին՝ երրորդ, գ լուխը վերնագրված է «Օահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության կանխման հասկացությունն ու հիմնական ուղղությունները» և նվիրված է նշված մոտիվացիայով կատարվող հանցանքների պատճառ կամ պայման հանդիսացող գ ործոմների վերացմանն ու չեզոքացմանն ուղղված միջոցառումների քննարկմանը: Վերլուծության ենթարկելով նշված գ ործոմները՝ ատենախոսն առաջարկում է.

1. Ավազակությունների, շահադիտական դրոմներով սպանությունների, բանդիտիզմների, բռնությամբ զուգ որդված շորթումների և կողոպուտների կանխման համար մշակել կանխման միասնական քաղաքականություն, որն իր մեջ պետք է ներառի ինչպես ընդհանուր սոցիալական, հատուկ կրիմինոլոգ իական, այնպես էլ վիկտիմոլոգ իական կանխման միջոցառումներ: Մասնավորապես, այն պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

ա/ նյութապես անապահով խավի ներկայացուցիչներին նյութական օժանդակության ցուցաբերման հստակ մեխանիզմների մշակում: Բանն այն է, որ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց շրջանում մեծ թիվ են կազմում անաշխատունակները, միայնակ մայրերը, բազմանդամ ընտանիքների ներկայացուցիչները, որոնք իրենց նյութական դժվարությունները, ծանր նյութական կացությունը հաղթահարելու համար դիմում են հանցանքի կատարման:

բ/ գ ործագործի մասնագ իտական վերապատրաստում և աշխատանքով ապահովում: Օահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց շրջանում մեծ թիվ են կազմում գ ործագործները (63,67%), ընդ որում մեծ է նրանց թիվը հատկապես ռեցիդիվ կատարածների շրջանում: Նման վիճակը պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, որ պատժի կրման ընթացքում ազատագրվման (հատկապես երկարաժամկետ ազատագրվման) դատապարտված անձանց մեծամասնությունը կորցնում են իրենց մասնագ իտական որակավորումը, այնպես էլ նրանով, որ հնարավոր գ ործատուները, տեղեկանալով անձի դատվածության մասին, խուսափում են նրան աշխատանքի վերցնելուց: Բնական է, որ չունենալով աշխատանքի ձեռք բերման հեռանկար՝ նախկին դատապարտյալները դիմում են նոր հանցանքների կատարման: Ուստի հանցագ ործությունների կանխման ընդհանուր սոցիալական միջոցառումների շարքում կարևորագ ույններից մեկն էլ ուղղիչ հիմնարկներից դուրս եկած անձանց աշխատանքով ապահովման խնդիրն է:

գ/ «անտուճանքի», թափառաշրջիկների և մտրացկանների հայտնաբերում, հաշվառում և հնարավորության սահմաններում հանրակացարանային տիպի օթևանով ապահովում կամ պետության կողմից ստեղծված հատուկ հաստատություններում (ծերանոցներ, մանկատներ, պետության հովանավորության ներքո գտնվող հատուկ ուսումնադաստիարակչական հիմնարկներ կամ համանման հաստատություններ) տեղավորում: Նշված կատեգորիայի անձանց կողմից մեծ է թե շահադիտական-բռնի մտտիվացիայով հանցանքների կատարման և թե դրանցից տուժելու հավանականությունը, ուստի ատենախոսը կարևորում է նրանց նկատմամբ առանձնահատուկ ուշադրության ցուցաբերումը: Միաժամանակ նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել հատկապես մտրացկանության մեջ ներգրավված անչափահասներին, քանի որ դպրոց չհաճախող, կրթություն չստացող, եկամտի ստացման դյուրին ուղին գտած անչափահասը, հետագայում զրկվելով դրանից, պետք է դիմի նյութական միջոցների ձեռք բերման մեկ այլ «հեշտ» եղանակի՝ հանցանքի կատարման:

դ/ միզ քացիոն պրոցեսների բացասական ազդեցության թուլացում: Ատենախոսի կողմից նշվում է, որ ինչպես գյուղերից դեպի քաղաք կատարվող տեղաշարժերը, այնպես էլ հենց քաղաքի ներսում բնակչության վերաբաշխումը ունեն մեծ քրեածին ազդեցություն: Մի կողմից, միզ քացիայի ենթարկված անձի համար ընդունելի մորմերի, արժեքների անհամապատասխանությունը նոր միջավայրում առկա մորմերին և արժեքներին, հարմարվողականության ցածր մակարդակը, նոր միջավայրի ներկայացրած պահանջներին համապատասխանելու անհնարինությունը (սոցիալական, մշակութային և այլն) դժվարություն է առաջացնում անձի միջանձնային հարաբերությունների, կապերի ձևավորման, նոր միջավայրում ինքնահաստատման համար և մղում հանցավոր վարքագծի դրսևորման (այդ թվում՝ նաև շահադիտական-բռնի մտտիվացիայով հանցանքների կատարման), մյուս կողմից էլ նոր միջավայրում մտերիմների բացակայությունը, կղզիացվածությունը բարձրացնում է հանցավոր ոտնձգության (հատկապես՝ ավազակությունների, բռնությանը զուգ որդված կողոպուտների) ենթարկվելու նրանց հավանականությունը:

ե/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչության, հատկապես երիտասարդների և անչափահասների ազատ ժամանցի ոլորտի կազմակերպում: Այսօր մեր հանրապետությունում գրեթե լիովին բացակայում են բնակչության հիմնական զանգվածի հետաքրքրություններն արտացոլող ազատ ժամանցի վայրերը, իսկ այն փոքրաթիվները, որոնք կան, պահանջում են նյութական ծախսեր, հետևաբար անհասանելի են բնակչության մեծ մասի համար: Ինչ վերաբերում է երիտասարդությանը, ապա նրանց ճնշող մեծամասնությունը նախընտրում է ազատ ժամանակն անցկացնել դիսկոտեկներում, բարերում, սրճարաններում, խաղատներում և նմանատիպ օբյեկտներում, որոնք այսօրվա դրությամբ ունեն մեծ քրեածին նշանակություն. մի կողմից դրանք հաճախ հանդես են գալիս որպես հանցանքների կատարման վայրեր (օրինակ, այդտեղ են կատարվել բռնությանը զուգ որդված շորթումների 18%, բռնությանը զուգ որդված կողոպուտների 5%), իսկ մյուս կողմից՝ դրանք հաճախելու համար անհրաժեշտ նյութական միջոցներ ձեռք բերելու նպատակով երիտասարդները հաճախ դիմում են հանցանքի կատարման:

զ/ իրավապահ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ջանքերով քրեածին վայրերի հայտնաբերում և չեզոքա-

ցում: Ատենախոսի կողմից Հայաստանի Հանրապետությունում շահադիտական-բռնի մտտիվացիայով կատարված հանցանքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ նշված հանցանքներն առավել հաճախ կատարվում են հասարակական վայրերում (փողոցներում և այդ ինչում են կատարվել՝ ավազակությունների 24%, բռնությանը զուգ որդված կողոպուտների 63%, շահադիտական դրդումներով սպանությունների 38%, բռնությանը զուգ որդված շորթումների 32%, տրանսպորտային միջոցներում ավազակությունների 7.5%, բռնությանը զուգ որդված կողոպուտների 13%, այլ հասարակական վայրերում՝ բռնությանը զուգ որդված շորթումների 22%, ավազակությունների 16%-ը):

է/ թմրամոլների և ալկոհոլիկների, հոգ եկան անոմալիաներով տատալող անձանց հայտնաբերում, հաշվառում և բուժում: Ատենախոսի կողմից նշվում է, որ շահադիտական-բռնի մտտիվացիայով հանցանքներ կատարած անձանց 13%-ի մոտ առկա են տարաբնույթ հոգ եկան անոմալիաներ, իսկ ինչպես հայտնի է, հոգ եկան խանգարումները նպաստում են դյուրագրություն, կասկածամտության, դաժանության զարգացմանը, կամային պրոցեսների և հսկիչ մեխանիզմների թուլացմանը, անձի սոցիալական ադապտացիայի դժվարեցմանը, հետևաբար և բռնության գործադրմանը հանցավոր վարքագծի դրսևորման հավանականության բարձրացմանը:

ը/ ալկոհոլային հարբածության վիճակում գտնվող անձանց հասարակական վայրերից հնարավորինս արագ հեռացում՝ ինչպես նրանց կողմից, այնպես էլ նրանց նկատմամբ հնարավոր ոտնձգությունները կանխելու համար: Ատենախոսը նշում է, որ իր կողմից կատարված ընտրանքային հետազոտության արդյունքների համաձայն հանցանքի կատարման պահին տարբեր աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում են գտնվել՝ շահադիտական դրդումներով սպանություններ կատարած անձանց 50%, բռնությանը զուգ որդված կողոպուտներ կատարած անձանց 51%, ավազակություններ կատարած անձանց 35%-ը: Միաժամանակ, բանդիտիզմից տուժածների 20%, շահադիտական դրդումներով սպանությունից տուժածների 25%, ավազակությունից տուժածների 14%, բռնությանը զուգ որդված կողոպուտից տուժածների 24%-ը հանցավոր ոտնձգության ենթարկվելիս գտնվել են ալկոհոլային տարբեր աստիճանի հարբածության վիճակում: Ընդ որում, շահադիտական դրդումներով սպանություններից տուժած անձանց 6,25%, բռնությանը զուգ որդված կողոպուտներից տուժածների 6,1%, ավազակություններից տուժածների 1,9%-ը, գտնվելով ալկոհոլային ծանր աստիճանի հարբածության վիճակում, զրկված են եղել իրենց նկատմամբ կատարվող ոտնձգությունից պաշտպանվելու հնարավորությունից, իսկ շահադիտական դրդումներով սպանություններից տուժած անձանց 19%, ավազակություններից տուժածների 10%, բռնությանը զուգ որդված կողոպուտներից տուժածների 8%-ը ալկոհոլային հարբածության վիճակում իրենց դրսևորած կոպիտ, ազ թեսիվ վարքագծով խթանել են իրենց նկատմամբ բռնության գործադրմանը:

թ/ իրավապահ մարմինների կողմից զենքի հայտնաբերման և առգրավման ժամանակ առկա թերությունների վերացում: Ատենախոսը կարծում է, որ Հայաստանի Հանրապետությունում շահադիտական-բռնի մտտիվացիայով հանցանքների, մասնավորապես ավազակությունների և բանդիտիզմների կատարմանը նպաստող պայմաններից մեկն էլ հանցանք կատարող անձանց համար զենքի հասանելիությունն է: Ծահադիտական-բռնի մտտիվացիայով հանցագործությունների ատենախոսի կողմից կատարված ու-

սումնասիրության համաձայն՝ հրազենի գ ործադրմամբ են կատարվել ավազակությունների 20%, բռնությամբ զուգ որդված կողոպուտների 2%, բռնությամբ զուգ որդված շորթումների 13%, բանդիտիզմների 95%-ը, իսկ ավազակությունների 35%, բռնությամբ զուգ որդված կողոպուտների 16%, շահադիտական դրդումներով սպանությունների 39%, բռնությամբ զուգ որդված շորթումների 34%-ը կատարվել են սառը զենքի գ ործադրմամբ: Ատենախոսը գ տնում է, որ նման վիճակը պայմանավորված է ինչպես Արցախյան հակամարտության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում հայտնված հրազենի մեծ քանակով և ապօրինի հրազենի շուկայի ձևավորմամբ, այնպես էլ զենքի օրինական վաճառքի, տրման և պահպանման կարգի խախտումներով, իրավապահ մարմինների կողմից զենքի ժամանակին առգրավման հարցում թույլ տրված թերացումներով:

ժ/ հանցավոր խմբերի ստեղծման կանխում, ինչպես նաև արդեն ձևավորված հանցավոր խմբերի հայտնաբերում և վերացում: Ծահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության ատենախոսի կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ բանդիտիզմների, կողոպուտների, շահադիտական դրդումներով սպանությունների զգալի մասը կատարվում են հանցավոր խմբերի կողմից: Ընդ որում, նման խմբերի կազմակերպիչները, որպես կանոն, հանցանքի կատարման, ուղղիչ հիմնարկներում պատժի կրման փորձ ունեցող անձինք են: Վերջիններին կողմից նման վարքագծի դրսևորմանը նպաստում են ինչպես ուղղիչ գ աղոթներում դատապարտյալների շրջանում ընդունված «չգրված օրենքների» և նորմերի արմատավորումը, ուղղիչ գ աղոթներից ազատվելուց հետո աշխատանքի ձեռք բերման դժվարությունները, մեծ քանակությամբ ազատ ժամանակի առկայությունը և հարբեցողությամբ ու մոլեխաղերով զբաղվելը, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից արդյունավետ հսկողության բացակայությունը ուղղիչ հիմնարկներից ազատ արձակված (այդ թվում՝ նաև պայմանականորեն ազատ արձակված) անձանց նկատմամբ:

ի/ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների բացահայտման և դրանք կատարած բոլոր անձանց քրեական պատասխանատվության և պատժի ենթարկման ժամանակ տեղ գ տած թերացումների վերացում: Ատենախոսը գ տնում է, որ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների պատճառական մեխանիզմում վնասող նշանակություն ունեցող տարրերից է թերահավատությունը քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիության հանդեպ, որն էլ, առաջին հերթին, պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում բուռն զարգացում ապրող կաշառակերությամբ և կոռուպցիայով, պաշտոնեական հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի բացակայությամբ: Մասնավորապես, կաշառակերության և կոռուպցիայի տարածումը պետական օղակներում, այդ թվում նաև իրավապահ մարմիններում, նպաստում է հանցավորության լատենտայնացմանը, հանցանքներ կատարած անձանց անպատժելիությանը, նրանց կողմից նոր հանցանքների կատարմանը:

Ծահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության լատենտայնացմանը նպաստում է նաև իրավապահ մարմինների աշխատակիցների անտարբեր, անփույթ վերաբերմունքը իրենց վրա դրված պարտականությունների կատարման հանդեպ, ինչն էլ պայմանավորված է ինչպես կատարվող աշխատանքի և դրա դիմաց իրավապահ մարմինների աշխատակիցներին տրվող վարձատրության միջև եղած անհամապատասխանությամբ, ի-

րավապահ մարմինների նյութատեխնիկական թերհագեցվածությամբ, կատարվող աշխատանքի հանդեպ իրական վերահսկողության բացակայությամբ, հասարակությունում տիրող ընդհանուր բարձրորդի և ապատիկ վիճակով, այնպես էլ իրավապահ մարմինների աշխատակիցների ցածր մասնագիտական պատրաստվածությամբ: Քիչ դեր չի խաղում նաև հանցավորության կանխման միջոցառումների իրականացման ժամանակ համակարգվածության և կողորդի միջոցառումների, պարտականությունների և պատասխանատվության հստակ բաշխման, գ ործում վերահսկողության բացակայությունը, ինչն էլ հանգեցնում է իրականացվող միջոցառումների ցածր արդյունավետության: Ատենախոսի կարծիքով, նշված թերությունները կարելի է վերացնել՝ իրավապահ մարմինների աշխատակիցների նյութական վիճակը բարելավելով, իրավապահ մարմինների նյութատեխնիկական վերազինման համար լրացուցիչ միջոցներ տրամադրելով, հանցանք կատարած անձից ինչպես դատական, այնպես էլ նախնական քննության ժամանակ կատարված իրական ծախսերի լրիվ գ անձման մեխանիզմների մշակմամբ, իրավապահ մարմիններում աշխատանքի ընդունման, ինչպես նաև ատեստավորման ժամանակ տեղ գ տնող թերությունները վերացնելով, իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով նրանց սեմինարների, այդ թվում նաև միջազգային սեմինարների ընդգրկելով և այլն:

լ/ իրավապահ մարմինների կողմից քաղաքացիներից ստացված հայտարարությունների ընդունման ու դրանց ընթացք տալու ժամանակ տեղ գ տած թերությունների, գ ործի նախնական քննության կամ դատական քննության ժամանակ հնարավոր քաշքշուկի վերացում, քանի որ այսօր Հայաստանի Հանրապետությունում հանցավորության լատենտայնացման պատճառներից մեկն էլ հենց նշված գ ործոններն են:

խ/ իրավախախտումների հանդեպ հասարակության անհամադրժողականության, բնակչության ակտիվության բարձրացում:

ծ/ բնակչությանը հանցագործությունների, քրեածին վայրերի, հանցագործություններից պաշտպանվելու մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովում: Մասնավորապես, շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցագործությունների դեպքում պատճառահատուկ ուշադրություն պետք է դարձվի հատկապես քաղաքներում բնակվող երիտասարդ տղամարդկանց (որպես առավել վիկտիմիզացված խմբի), որոշակի մասնագիտության տեր անձանց (օրինակ՝ բանկերի, տարադրամի փոխանակման կետերի կաշառակերներին, տաքսու վարորդներին), և նրանց համար պետք է մշակվեն ցուցումներ, որոնք նրանց թույլ կտան, ոտնձգության ենթարկվելիս, դրսևորելու ճիշտ վարքագիծ:

2. Ծահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների կանխման համար ստեղծել հատուկ մարմիններ (գ աղոթներում գ ործող հոգեբանական ծառայություններ, հասարակությունում նախկին դատապարտյալների ինտեգրումն ապահովող պետական հոգածության ներքո գ տնվող հիմնարկություն կամ հասարակական կազմակերպություն), որոնք հնարավորություն կընձեռեն նվազեցնել հանցագործություններից: Բանն այն է, որ հասարակությունից որոշակի ժամկետով (հատկապես երկար ժամանակով) մեկուսացումը անձի մոտ կարող է հանգեցնել հոգեկան ճնշվածության, դեպրեսիայի, սոցիալական կամ հոգեբանական օտարացման, միջանձնային հարաբերություններից հեռացման: Ընդ որում, որքան երկար է հասարա-

կույթունից անձի մեկուսացման ժամկետը, այնքան ավելի բարձր է նրա տագ նապայնությունն ու հոգ եկան ճնշվածությունը: Նման վիճակն առավել բնորոշ է ազատագրված ձևով պատիժ կրող անձանց, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցանքների կատարման համար երկարաժամկետ ազատագրված ղատապարտվածներից. ուղղիչ հիմնարկներից ազատ արձակվելով և բախվելով հասարակական կյանքում տեղ գտած տարաբնույթ փոփոխություններին՝ ճնշված անձինք շատ հաճախ հայտնվում են իրենց համար լրիվ խորթացած, օտարացած միջավայրում: Ուստի շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագ ործությունների կանխման առումով դրական քայլ կլինի ինչպես գաղութներում հոգ երանական (խորհրդատվական) ծառայությունների ստեղծումը, այնպես էլ պետական հոգ ածության ներքո գտնվող հատուկ մարմնի կամ հասարակական կազմակերպության ստեղծումը, որը կզբաղվի ուղղիչ հիմնարկներից ազատ արձակված անձանց կյանքի նոր պայմաններին հարմարեցնելով, նրանց կրթելով, կենսական հիմնախնդիրների լուծմանն օժանդակելով (օրինակ՝ աշխատանք կամ ծամանակավոր կացարան տրամադրելով):

3. Իրավապահ մարմինների և պետության հանդեպ տուժողների վստահությունը բարձրացնելու, հանցավորության լատենտայնացման դեմ պայքարելու նպատակով ստեղծել հատուկ մարմին, որը կապահովի տուժողների կրած նյութական և բարոյական վնասների հատուցումը: Նշված մարմնի ստեղծման համար կարելի է կիրառել արտասահմանյան երկրներում ճնշված ոլորտում առկա փորձը: Օրինակ, Իտալիայում թեև պետությունը հանցանք կատարողին պարտավորեցնում է հատուցել տուժողի կրած վնասները, սակայն անհրաժեշտության դեպքում այդ գումարը կարող է հատուցվել նաև գաղութների դեպարտամենտի կողմից՝ աշխատող դատապարտյալների աշխատավարձի գ անձումներից և անհատների նվիրատվություններից գ ոչլացող ֆոնդից: Իսկ այն դեպքերում երբ տուժողին վնաս է հասցվել շորթողների պահանջները չկատարելու համար, ապա հասցված վնասը կարող է հատուցվել Իտալիայի արդյունաբերության և առևտրի նախարարության ենթակայությամբ գ ործող, պետության կողմից հսկվող հատուկ ապահովագրական ընկերության կողմից:

Եզրափակման մեջ շարադրված են առեմախոսության ամփոփիչ դրույթները:

Թեկնածուական առեմախոսության առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլումն են գ տել հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության վիճակը Հայաստանի Հանրապետությունում (Պետություն և իրավունք, ՀՀԻՄ-ի գ իտական աշխատությունների ժողովածու 2001, թիվ 4 (14), 74-80 էջերը):

2. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-հոգ երանական բնութագ իրը (Պետություն և իրավունք, ՀՀԻՄ-ի գ իտական աշխատությունների ժողովածու 2002, թիվ 2(16), 78-88 էջերը):

3. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության վիկտիմությունը իական ասպեկտը (Իրավագ իտության հարցեր, գ իտական աշխատությունների միջբունական ժողովածու 2002, թիվ 1-2, 55-58 էջերը):

4. Առաքելյան Ս.Վ., Գաբրույան Ա.Հ., Մարգարյան Ա.Ռ. «Կրիմինոլոգ իական հետազոտությունների մեթոդիկա» (ուսումնական ձեռնարկ, Երևան 2001, 101-117, 135-205 էջերը):

РЕЗЮМЕ

После распада СССР в Республике Армения был зарегистрирован беспрецедентный рост преступности и одним из самых актуальных проблем нашего новообразованного государства стало ведение эффективной борьбы с преступностью. В этом плане особую важность приобрело подготовка научно обоснованных мероприятий направленных на предупреждение корыстно-насильственной преступности (бандитизмов, убийств из корыстных побуждений, насильственных грабежей, разбоев, вымогательств, сопряженных с насилием), так-как анализ состояния преступности за последние 15 лет свидетельствует о том, что по темпам своего роста эти преступления обгоняют темпы роста общей преступности. Кроме того, корыстно-насильственная преступность, будучи взаимосвязанной с другими структурными элементами преступности, и в первую очередь с насильственной преступностью, имеет непосредственное влияние на них: рост уровня корыстно-насильственной преступности приводит к увеличению числа насильственных преступлений.

С этой точки зрения, представленная на защиту диссертация, посвященная исследованию криминологической характеристики корыстно-насильственной преступности, имеет существенное значение относительно научного изучения преступности и ведения эффективной борьбы с ней.

В диссертации не только проведен научный анализ уровня, структуры, динамики названной преступности, но и выявлены социально-демографические, социально-ролевые и социально-психологические особенности лиц, совершивших корыстно-насильственные преступления, всесторонне изучена их мотивационная сфера. При этом, по мнению диссертанта, бандитизмы, убийства из корыстных побуждений, насильственные грабежи, разбои, вымогательства, сопряженные с насилием должны быть изучены как отделанная группа преступлений, совершаемые по самостоятельной, полимотивированной корыстно-насильственной мотивации.

Теоретической, практической и методологической основой диссертации послужили монографии и научные работы известных ученых в области криминологии, социологии, психологии, психиатрии, а также статистические данные, материалы судебной

практики предоставленные государственными органами как Республика Армения, так и некоторых зарубежных государств.

Настоящая работа представляет первый опыт монографического, научного изучения криминологической характеристики корыстно-насильственной преступности в Армении. Сделанные в диссертации заключения имеют важное теоретическое и практическое значение и могут быть использованы как в научных целях, так и при подготовке предупредительных мероприятий правоохранительными органами Республики Армения.

Работа может служить в качестве научно-практического пособия, предназначенного для студентов, аспирантов и преподавателей высших учебных заведений.

Чесноков

05.02.2013

практики представляемых государственных органов как Рес-
публики Армения, так и иностранных государств.

Настоящая работа представляет собой опыт эмпирическо-
го анализа и изучения криминологической характеристики ко-
ррупции – мажоритарной преступности в Армении. Сделавшие в
диссертации мажоритариям анализ теоретических и практиче-
ских сведений и могут быть использованы как в научном плане,
так и при подготовке практических мер по борьбе с коррупци-
онными органами Республики Армения.

Работа может служить в качестве справочно-практического
пособия, предназначенного для сведения, а также в качестве
материала для научных исследований.

Handwritten signature

5

ՀՀ Ազգային գրադարան



NL1762029

02.03.2013